

3.2 Առևտրային բանկեր

Ըստ ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների, 2000թ. հունիսի 30-ի դրությամբ գործող բանկերի (բանկային գործառնություն իրականացնելու արտոնություն ունեցող) քանակը 31 միավոր է, իսկ բանկերի մասնաճյուղերի ընդհանուր քանակը՝ 179:

Առևտրային բանկերի ընդհանուր ակտիվները 2000թ.հուլիսի 1-ի դրությամբ կազմել են 225,8 մլրդ. դրամ, իսկ ընդհանուր պարտավորությունները՝ 191.6 մլրդ դրամ և 2000թ. հունվարի 1-ի դրությամբ աճել համապատասխանաբար՝ 34,9 մլրդ. և 33,8 մլրդ. դրամով:

Առևտրային բանկերի ընդհանուր կապիտալը 2000թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 34,1 մլրդ դրամ, որից կանոնադրական կապիտալը՝ 25,7 մլրդ դրամ (ընդհանուր կապիտալի 75,4%), իսկ գլխավոր պահուստը՝ 3,8 մլրդ. դրամ և տարեսկզբի համեմատ աճել համապատասխանաբար՝ 1,1 մլրդ., 2,8 մլրդ. և 1,6 մլրդ. դրամով:

Առևտրային բանկերի 2000թ. հուլիսի 1-ի դրությամբ զուտ շահույթը կազմել է 2,5 մլրդ. դրամ, ընդ որում շահույթով աշխատող 18 բանկերի շահույթը կազմել է 6,5 մլրդ. դրամ, իսկ վնասով աշխատող 13 բանկերի վնասը՝ 4,0 մլրդ. դրամ:

Առևտրային բանկերի վարկային ներդրումների դինամիկան

(մլն. դրամ)

	1999թ.	2000թ.				
	1.07	1.01	1.04	1.05	1.06	1.07
Վարկային ներդրումներ³, ընդամենը	59710	74397	80518	82816	86757	87838
<i>այդ թվում՝</i>						
կարճաժամկետ	34422	41272	36588	40769	42009	42163
<i>%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ</i>	57.6	55.5	45.4	49.2	48,4	48.0
երկարաժամկետ	25288	33125	43930	42047	44748	45675
<i>%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ</i>	42.4	44.5	54.6	50.8	51.6	52.0
որից՝ վարկեր տարադրամով	50239	60630	68623	70477	75125	76794
<i>այդ թվում՝</i>						
կարճաժամկետ	26321	32941	30740	34669	36771	37842
<i>%-ով տարադրամով վարկերի նկատմամբ</i>	52.4	54.3	44.8	49.2	48.9	49.3
երկարաժամկետ	23918	27689	37883	35808	38354	38952
<i>%-ով տարադրամով վարկերի նկատմամբ</i>	47.6	45.7	55.2	50.8	51.1	50.7

2000թ. հուլիսի 1-ի դրությամբ երկարաձգված և ժամկետանց վարկերը կազմել են համապատասխանաբար՝ 12323 մլն. և 9575 մլն. դրամ: Տարեսկզբի նկատմամբ երկարաձգված վարկերը աճել են 3772 մլն դրամով կամ 44,1, իսկ ժամկետանց վարկերը նվազել են 355 մլն. դրամով կամ 3,6%-ով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ երկարաձգված և ժամկետանց վարկերը նվազել են համապատասխանաբար՝ 37 մլն. և 900 մլն. դրամով:

Բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների մնացորդը տարեսկզբի նկատմամբ աճել է 8975 մլն. դրամով կամ 29,2 %-ով և 2000թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել՝ 39660 մլն. դրամ, իսկ հունիսի 1-ի նկատմամբ աճել է 1870 մլն. դրամով կամ 4,9%-ով:

Բանկային համակարգում սպասարկվող հաճախորդների քանակը 2000թ. հունիսի վերջի դրությամբ կազմել է 530316, որից ֆիզիկական անձինք՝ 461844, իսկ նրանց հաշիվների քանակը համապատասխանաբար՝ 354225 և 270686: Ընդ որում, ներառված չեն միացյալ հաշիվներում ընդգրկված հաճախորդները և վերջիններիս հաշիվների քանակը:

3 ընդգրկված չեն երկարաձգված և ժամկետանց վարկերը

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2000թ. հունվար-հունիսին ՀՀ բանկային համակարգում դրամարկղային շրջանառության մուտքերը կազմել են 192686,0 մլն. դրամ (հունիսին՝ 35439,5 մլն. դրամ), իսկ ծախսերը՝ 188579,1 մլն. դրամ (հունիսին՝ 36726,0 մլն. դրամ): Մուտքերը գերազանցել են ծախսերի գումարը 4106,9 մլն. դրամով (հունիսին՝ ծախսերը գերազանցել են մուտքերի գումարը՝ 1286,5 մլն. դրամով): 2000թ. հունվար-հունիսին արտարժույթի վաճառքից մուտքերը կազմել են 54037,5 մլն. դրամ (հունիսին՝ 10814,1 մլն. դրամ), իսկ արտարժույթ գնելու համար ծախսերը՝ 53280,6 մլն. դրամ (հունիսին՝ 10147.2 մլն. դրամ): Արտարժույթի վաճառքից մուտքերը գերազանցել են արտարժույթ գնելու համար ծախսերի գումարին 756,9 մլն. դրամով, իսկ հունիսին արտարժույթի վաճառքից մուտքերը գերազանցել են արտարժույթ գնելու համար ծախսերի գումարին 666,9 մլն. դրամով: